

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Աւստրիոյ Հայ Համայնքի

Ապրիլեան Եղեռնի ոգեկոչման հանդիսութիւններ

Ինչպէս Հայաստանում, Արցախում եւ աշխարհի բոլոր Հայ գաղթօջախներում, Աւստրիայի Համայնքն եւս բարձր որակով ոգեկոչեց Ապրիլեան Չոհերի 95 ամեակին նուիրուած հանդիսութիւնները:

Ապրիլ 24-ի առաւօտեան, Վիեննայի Հայ Առաքելական Ս. Զոհիսիմէ Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ հանդիսաւոր Սուրբ Պատարագ, պատարագիչ՝ Համայնքի Հոգեւոր Հովիւ Տէր Անդրեաս քահանայ Իսախանեան, ապա Հոգեհանգստեան պաշտօն եկեղեցւոյ շրջափակում տեղադրուած Ապրիլեան Եղեռնի Յուշարձանի մօտ, որի պատուանդանին դրուեցին յաւարտ հոգեհանգստի Վիեննահայ Կազմակերպութիւնների եւ Հայրենակիցների ծաղկեպսակներն ու ծաղիկները: Հոգեհանգստից յետոյ Մշակութային Տան Սրահում տեղի ունեցաւ երաժշտական-գեղարուեստական ծրագիր, “Անլռելի Չանգակատուն” խորագրով, կատարմամբ Եկեղեցու երգչախմբի մեներգչուհի Տիկին Լիանա Խաչատրեանի: Ծրագրի ավարտից յետոյ Հայրենակիցները այցելեցին Վիեննայի կենտրոն թաղամասի Շիլլեր հրապարակում, Աւստրո-Հայկական Մշակութային Ընկերութեան կողմից 1998 թուականին տեղադրուած Ֆրանց Վերֆելի Յուշարձանին եւ մասնակցելով հոգեւոր արարողութեան ծաղկեպսակներ եւ ծաղիկներ տեղադրեցին յուշարձանի պատուանդանին:

Նոյն օրը երեկոյեան, Վիեննայի Միխիթարեան Միաբանութեան սրահում տեղի ունեցաւ յուշ երեկոյ, նուիրուած Ապրիլեան Չոհերի յիշատակին:

Ապրիլ 26-ին, բարձր հովանաւորութեամբ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր Դեսպան Դր. Աշոտ Հովակիմեանի, Եկեղեցական Վարչութեան կողմից Վիեննայի Ս. Զարլգ եկեղեցւում տեղի ունեցաւ յիշատակի յուշերեկոյ, նախ հոգեհանգստեան արարողութիւն, ապա դասախօսութիւն նուիրուած մեծ եղեռնին:

Նախ քան դասախօսութեան մեկնարկը, գերմաներէն, հայերէն եւ անգլերէն լեզուներով ելոյթ ունեցան Աւստրիոյ Հայ Առաքելական Եկեղեցական Վարչութեան Ատենապետ Դր. Հայկ Ազընբաուերը եւ Հայաստանի Հանրապետութեան Աւստրիայում լիազօր եւ արտակարգ Դեսպան Դր. Աշոտ Հովակիմեանը:

Որպէս դասախօս Եկեղեցական Վարչութեան կողմից Վիեննա Է հրաւիրուել գերմանացի մտաւորական, Հայ ժողովրդի անկեղծ բարեկամ Պրոֆ. Ռալֆ Ջիորդանոն, որի ներկայութեամբ ընթերցուեց Հայ ժողովրդի ցեղասպանութեան նուիրուած նրա հոյակապ դասախօսութիւն-գրութիւնը:

Երեկոյի գեղարուեստական բաժնում ելոյթ ունեցաւ “Բիւեյան” քառեակը Կոմիտասեան հրաշալի ստեղծագործութեամբ:

Բարձրաւորակ եւ բացառիկ երեկոյ, արժանի բարձր գնահատականի, որ կազմակերպել էր Աւստրիոյ Հայ Առաքելական եւ Եկեղեցական Համայնքի Վարչութիւնը, որին մասնակցեցին բացի հարիւրաւոր հայրենակիցներ նաեւ ավստրիացի մտաւորականներ եւ Դեսպանի ու Վարչութեան կողմից հրաւիրուած Աւստրիայում պաշտօնավարող դիւանագիտական ներկայացուցիչներ եւ միջազգային կազմակերպութիւններում աշխատող բարձրաստիճան անհատներ: Երեկոյի ավարտին, մասնակիցները խորը զգացումով եւ ոտընկալս, իրենց ջերմ գնահատանքն ու շնորհակալութիւնը յայտնեցին Պրոֆ. Ռալֆ Ջիորդանոյին եւ կազմակերպիչներին:

Ռազմէն

Վիեննա, 26.04.2010